

ՍԱՀՄԱՆ ԱՆԱՆՑԱՆԵԼԻ

Մարդը կեցած իր արարչին դէմ կարծես

պիտի ահա քրքրայ ...

Դող մը ցնցող կը յառնէ

Քաղաքներէն եւ հիւսիսներէն դարերու,

... Ու պրկըւող նիզերու, ցանց մը միայն ...

*

Հիւլէներէն անհաշիւ ու տարերբէն կազմուած

Բըջիջներուն մէջ մարդոց՝

Անյիշատակ դարեր կան, ու մարդկային ցանկութիւն

տարերային բընագողով ... եւ անաւարտ Բաբելոն ...

կառուցումներ երկնահուպ՝ ապառաժէն բարձրացող՝

Երջանկութեան ի խնդիր, հսկայ արշաւ, ուրական ...:

Ու մարդը նոյն,

այսահար,

կալանաւոր՝ իր նիզին՝ ազատութեան, տեւումի՝,

կը տառապի, կը կոտորայ ...

Եւ դարերը կը ծիծաղին. «Շատեր կ'անցան» ...:

Ո՛վ անվախեան կատակերգը

Գոյացութեան այս փոքրիկ, սահմանափակ վայրկեանին

ու անըսկիզբ ժամանակի մէջ վագող

կարեատեւ բոց, ու լըռութեան մը մէջ նի՛չ, —

համայնակո՛ւլ խըլըրտում ... :

Հորիզոնին վըրայ մութ փոքորկումներ կը լեճան,

Արիւնակալ նիրաններու վըրայ կան

բազում աչքեր անյագուրդ,

Ո՛վ Տանթէ ...

Հորիզոնին վերայ մութ փոթորկումներ կ'որոտան
 ու կը հնչեն մամոնայի տանարներ ...

Մինչ երկիրներ կը փլլին դեռ աղմուկով
 Ու կը կանգնին լայնախարիսխ նոր բուրգեր :

Անկարեկիր,
 ծեր հոգիներ կը քառին ամսահամառի կողերուն,
 բանակներու բազմութիւնն անոնց գահին պատուանդան,
 ծեր հոգիներ անյագո՛ւրդ ...:

*

Բայց ... պիտի գա՛յ, պիտի գա՛յ,
 անվերելի,
 պրոնգէ շեղքը մահուան ...
 Ոսկեգոծ ու գօսացած այդ գանկերուն
 պիտի իջնէ ահա՛ ...
 Մահուան բըռունցքը ահեղ .

Ո՛վ Տանքէ,
 Պիտի քառալի՛ն,
 գլխիվայր՝ մարմիններն՝
 անեզրութեան մը մէջ մութ,
 անծանօ՛ք

... Բայց իրենց պիրկ նիրաններով
 սեղմըւած
 այդպէս, այդպէ՛ս
 ոսկեկոյտի մը վերայ ...:

Կեցի՛ր. Սահմա՛ն
 Անանցանելի :

1937

ԲԻԻԶԱՆԴ ԹՕՓԱԼԵԱՆ